Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖՏ 2018.

Երևան քաղաքում սեռավարակներով տառապող հղի կանանց համար բժշկական սարքավորումների տրամադրման նախագծի ստորագրման արարողությունը

2019 թ. մարտի 21-ին ՀՀ առողջապահության նախարարությունում տեղի ունեցավ «Երևան քաղաքում սեռավարակներով տառապող հղի կանանց համար բժշկական սարքավորումների տրամադրման ծրագրի» 88,748 ԱՄՆ դոլար (9,939,776 ճապոնական իեն) արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի տնօրեն պարոն Ռազմիկ Աբրահամյանի կողմից: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ ՀՀ առողջապահության փոխնախարար պարոն Արսեն Դավթյանի և շահառու բժշկական հաստատության անդամների երկայությամբ:

Ծրագրի նպատակն է Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտին տրամադրել և տեղադրել բժշկական սարքավորումներ, ինչպիսիք են մանկաբարձական աթոռը, գինեկոլոգիական աթոռը և ուլտրաձայնային համակարգը: Դրանց օգնությամբ ակնկալվում է կատարելագործել սեռավարակներով և ՄԻԱՎ / ՁԻԱՀ-ով տառապող հղի կանանց հետազոտման և ախտորոշման հնարավորությունները, մեղմացնել ռիսկերը և պաշտպանել թե մոր և թե նորածնի կյանքը ծննդաբերության ընթացքում: Արդյունքում, ինստիտուտում հետազոտվող 113 հղի կանայք և իրենց նորածինները ուղղակիորեն կշահեն ծրագրից: Երկարաժամկետ հեռանկարում այս ծրագրի շրջանակում աջակցություն կստանան տարատեսակ սեռավարակներով տառապող

հազարավոր հղի կանայք:

Ծանուցում. Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտը հիմնադրվել է Երևանում 1987թ.-ին: Այն շուրջօրյա ընդունել է վերոնշյալ ոլորտներում արտակարգ դեպքեր ունեցող հիվանդներ և վերջին երեք տարիների ընթացքում խնամել տարեկան միջին հաշվով 12,333 կանանց (8,898 հիվանդանոցի և 3,635 ամբուլատոր հիվանդ): Այն ճանաչված է որպես ոլորտի լավագույն բժշկական հաստատություններից մեկը՝ անձնակազմի հմտությունների և սարքավորումների շնորհիվ:

Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը

Դեսպան Յամադան և Վերարտադրողական առողջության, պերինատոլոգիայի, մանկաբարձության և գինեկոլոգիայի հանրապետական ինստիտուտի տնօրեն բժիշկ Աբրահամյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագրերը

Ֆոտոնկարահանում առողջապահության
փոխնախարար պարոն Դավթյանի և բժիշկ
Աբրահամյանի հետ արարողությունից հետո